

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՄԱՍԻՍ», ԹԻԻ 41

ԱՐԳՈՍ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՀԱՐՍԸ

ԿԱՏԱԿԱԽԱՂ ԵՐԿՈՒ ԱՐԱՐ ՄԷԿ ՊԱՏԿԵՐ

(Ժողովրդական ասուլիս)



PRINTED IN BULGARIA

1939

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

ՍՈՖԻԱ

891. 99

Վ-82

22.02.2013

27363

891.99

4-82

06 AUG 2010

19 NOV 2010

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐԸ

ԱՄԲԱԿՈՒՄ ՎԱՐԴ.	Միաբան Ս. Մակարայ վանքին
ՏԵՐ ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ՔԷՆ.	Գիւղին երեքը
ՄԱՐԿՈՍ ԱՂԲԱՐ	Ժամկոչ եւ լուսարար
ՏԱՆՏԱՆԵՆՑ ՄԿՈ	
ՍՈՂՈՄԷ	Մկոյի կինը
ԴԱՆԵԼ	Մկոյի որդին, փեսաներէն մեկը
ԶԱԽԱԼ ՊԵՅՈ	
ԵՂՍԱ	Պետոյի կինը
ԱԿՈՔ	Պետոյի որդին, փեսաներէն մեկը
ՀՌԻՓՍԻՄԷ	Ակոբի նշանաձր, պսակուած Դա- նէլի հետ
ՄԱՐԻԱՄ	Դանէլի նշանաձր, պսակուած Ա- կոբի հետ
ԶԱԽԱՆՆՑ ԳԱՐԻԷԼ	Հռիփսիմի հայրը
ՄԱՐԹԱ	Հռիփսիմի մայրը
ԵՐԿԱՆ ԱՐՇԱԿ	Մարիամի հայրը
ՏԻՒՐԻԿ	Մարիամի մայրը

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՀԱՐՍԸ

Պ Ա Տ Կ Ե Ր

ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ

(Տասնեակ մը զոյգեր կանգնած են եկեղեցւոյ բեմին առջեւ, իւրաքանչիւր զոյգի կողքին կեցած է կնիստաւոր: Ժողովուրդը դասէն դուրս, եկեղեցւոյ նաւուն մէջ: Հարսերն ամենքն ալ խստօրէն ծածկուած գլուխներով, անբախանք բան. ձրբ ֆողերու տակ: Բեմին երկու կողմերը կեցած են երկու մոմակալ փոքրիկներ: Քահանայի կողքին կեցած է Մարկոս Աղբար, բուրլառակիրը, բուրլառը ձեռքը, մոմ մը բռնած: Տէր Ղուկիանոս շուրջառով, պատարագի զգեստով, կանգնած է բեմին վրայ:)

Տէր Ղուկիանոս.— Սիրելի ժողովուրդ Աստուծոյ Ասօր մեր գեղին համար մենք օր մըն է՝ Փառք Աստուծոյ, չափա-
նուած, չլսուած բան էղաւ: Աստուծոյ սիրտը սեղանին էղեւը
ասօր պսակ դրանք աս բոլոր հարսներուն, փեսաներուն վը-
րայ: Տէրը ասոնք բոլորը իրարիւ կապեց: Ասոնք էմմէնը
իրարիւ միացած ինչպէս, ինչպէս որ աշխարհ (պատ-
ուած) էղած ծառերը միացած ինչ: Ասոնք էմմէնը սիրտը
ինչ: Քիչիկ մը էմմէն կարգացի Սիրտը Գրքէն. «Թողցէ այր
զհայր և զմայր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: զի են երկուք-
եան ի մարմին մի»: Ասոնք էմմէն մէկ չիֆթը մէկ հատ է.
էմմէն մէկ հարո փեսան եկեղեցիին պէս ինչ: Ալ իրենց հը-
մար աշխարհը մէկ հատ է: Պէք քէ որ ալ մոռնան իրենց
հարն ու մարը:



2982-2010

«Արդ, զոր Ասուած զուգեաց, մարդ մի՝ մեկնեացէ»,
կ'ըսէ սիւրբ Աւետարանը: Ըսել կ'ուզէ քիմ երբ Ասուած
զուգ ըրաւ, մարդը մեկնութիւն չպիտի տայ: Զունքի էս
մենն խորհուրդ է:

Մինչև աս ժամուն դիւոր աս հարսներն ու փեսաները
մէկ աղջիկ, մէկ մանչ էին, զատ զատ: Կիմա հոգիով մէկ
էղան. Յիսուս Քրիստոսի շնորհքով մէկ մարմին էղան. ի-
րարմէ չէն կընը բաժնուիր:

Ո՛վ դիւք փեսաներ ու հարսներ, Աստու էոջին էմ-
մէն մէկերնիդ մեռած, նորէն յարութիւն առած էք: Մինակ
պէք քէ գիննաք որ էոէջ երկու հոգի էիք, զատ զատ: Կիմ-
ճուկ էրկու մարմին էք միացած, մէկ հոգով: Ասուած աս
հրաշքը գործեց, որ դիւք ալ ձեր սիւրբ միութիւնով Աստու
ժառանգորդներ պատրաստէք:

Օրհնեալ էք, օրհնեալ եղբիւք, ամէն:

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Տ Ա.

Տ Ե Ս Ի Լ Ա.

ՀԱՐՍՆ ՈՒ ՀԱՐՍՆՔՈՒՐԸ

Հարսնութ. — Աղջիկ, Մայրամ, օղո՛ւլ, ես հոս եմ:
Պէքք ունիս նը ըսէ:

Հարս. — ...

Հարսնութ. — Բանի մը պէքքը չունի՞ս, օղու՛լ: Աղջիկ,
Մայրամ, հա՛րս, օղո՛ւլ, ինչո՛ւ չես խօսիր: Բերանդ կապ-
ուեցա՞ւ, ի՞նչ է: Հոս մինակուկ ինք, օղու՛լ, էս ու դիւն,
բան մը չունի՞ս ըսելիք: Էրեւդ բա՛ց նէյինք:

Հարս. — (Երեսը կը բանայ):

Հարսնութ. — Մա՛ւրը, աղջիկ, դիւն Մայրամը չե՛ս
նը, օղու՛լ, աղջիկ, դիւն որի՞ աղջիկ ես:

Հարս. — Զաղջոնց Գարբէլին աղջիկն իմ...:

Հարսնութ. — Աման, օղո՛ւլ... ի՞նչ պիտի ընինք հի-
մա՛...: Ո՛ւր է, հըպը, մեր Մայրամը...: Դիւն աս տիւ-
նին հարսը չես, օղո՛ւլ, մարի՛կ, Կիմա ի՞նչ պիտի ընինք...
Ընտո՛ր հոս եկար դիւն, օղու՛լ:

Հարս. — Զիյտիմ. աս որի՞ տիւն է:

Հարսնութ. — Տանտանենց Մկոյին տիւնն է աս, օղու՛լ:
Դիւն Տանտանենց Դանէլին հա՞րսն ես:

Հարս. — Էս գիտիմ նը, Զախալ Պետոյի Ակոբին
հարսն իմ...:

Հարսնութ. — Մարի՛կ, օղո՛ւլ, Կիմա խելքի՛ս պիտի
գայ...: (Կը վազէ դուրս):

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՆՈՅՆԻ ԵՒ ԿԵՍՈՒՐԸ՝ ՍՈՂՄԷ

(Ներս կը մտնեն)

Հարսնաբու.— Ահա, օղուլ, Սողմէ, իւմուրճա՛խը թէ-
փէխ:

Սողմէ.— Մարի՛կ, աղջի՛, դիւն որո՞ւ աղջիկ հա:

Հարսը (լալով).— Զախջոնց Գաբրէլին աղջիկն եմ...
Մեղա՛յ Տէ՛ր, մեղա՛յ...: Մարի՛կ... ա՛խ, մա՛րիկ...:

Սողմէ.— Կեցի՛ր նէիմ, սո՛ւս էղի՛ր, օղուլ...: Ասի՛նչ
փորձանք եկաւ մեր գլխուն: Ընտո՞ր եղաւ դիւն հոս եկեր հա:

Հարսը.— Զիյտի՛մ...:

Հարսնաբու.— Հի՛մա, կը հասկնամ, հի՛մա: Էք օր ժամ
գացինք, տեսայ օր մեր հարսին պէս հագցուցեր էին Զախ-
ջոնց Գաբրէլին աղջիկը և երկուքն իրարիւ քով դասը տա-
րին: Դասին մէջ աչքս վրան էր: Աս հարսը, աս աղջիկն
էր օր ձեր տղին քով կեցուցին ու անոր ձեռքն ասոր տը-
ռին: Ան վախիթը ես դասին մօտեցեր էի: Անկէ ետքը
մինչև դիւրս ելլելը աչքէս չփախցուցի: Հա՛լէ, տեսայ օր
տէր պապային դրած նարոտը աս պսակին, գլխին աջ կող-
մը կապ մը էղաւ ու կախուեցաւ: Մինչև հիմա ալ աս կախ-
ուած կապով և օրհնուած հարսն էր օր տիւն բերինք: (Պը-
սակը ցոյց կուտայ): Ահա, օղուլ, տէր պապային ձեր տը-
ղուն հետ պսակած հարսին նարոտը:

Սողմէ.— Եա՛, Աստուած ասի կամեցեր է եղեր մեր
մանչուն, հա՞...: Ի՛շտար կ'ուզէինք օր մեր հարսն ըլլար:
մարդս կ'ուզէր օր աս աղջկան հօրն ու մօրն երթանք,
խօսք տանք, խօսք առնինք, ըմբ չեղաւ: չիւնքի լսեցինք
օր հինգ օր էո՛ղ նշաներ ին էղեր: Տէ՛ր Աստուած, մեռնի՛մ
նախախնամութանդ: Վերջին օրն աս հրաշքը գործեցիր...:

Հարսնաբու.— Օղմ'ւլ, անիւնդ Հոռոփ էր, չէ՞:

Հարսը.— (Դուլսը կ'երեցնէ հաստական, միտ լա-
լով ու արտասուաբոր աչքերով):

Հարսնաբու.— Ա՛խ ես մեռնի՛մ քու զօրութանդ, Աս-
տուած, ի՞նչ պիտի ընինք հիմա: Ըսելէ Մայրամը, մեր աղ-
ջիկը տարած ին ուրիշ տիւն, ձեր հարսին տեղ: Էս պէք
քէ վազիմ երթամ անոր քով:

Հարսը.— Էս ալ պիտի երթամ մօրս տիւնը:

Սողմէ.— Կեցի՛ր, օղուլ, կեցէք քչիկ մը երկուքդ ա:
Պէք քէ էրիկս կանչիմ, մէ մը անոր հետ ալ տեսնուինք:
(Դուրս կ'ելլէ):

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՀԱՐՍՆ ՈՒ ՀԱՐՍՆԻՔՈՒՐԸ

Հարսնաբու.— Մի՛ լար, օղուլ, մի՛ լար: Տեսնինք Աս-
տուած ինչ կամեցեր է նը ան կ'ըլլայ:

Հարսը.— (Միտ կու լայ, աչքերը կը սրբէ):

Տ Ե Ս Ի Լ Դ.

(Ներս կը մտնեն կեսուրն ու պարոնասը՝ Մկօ)

Սողմէ.— Էկօ՛, մա՛րդ, նէյէ՛. հարսը կը տեսնե՞ս, աս
ան Հոռոփն է, օր առջի անգամ մեր տղին հարս առնել ու-
ղեցինք: Էք օր իմացանք նշաներ էին նը, վաղ էկանք:
Հիմա ժամուն մէջ մեր տղին հետ պսակուած հարսը իշտը
Հոռոփն է էղեր: մեր հարսնցու առած աղջիկը՝ Մայրամն ա
տարած ին ուրիշ տիւն: Տէր պապան առանց գիտնալու
պսակ դրեր է մեր տղուն և մեր աս հարսին վրայ: Հիմա
ի՛նչ կ'ըսես, ի՞նչ կ'անք ընել:

Մկօ (Զարմացած, մասը բերնից).— Եա՛...: Մեր տղին
աս հարսն ինք առեր... Եա՛, Աստուած ա՞ս հարսն է կամե-
ցեր...:

Հարսնաբու.— Հարսը կ'ուզէ օր իր մօրը տունն երթայ:

Մկօ.— Ի՛նչ կ'ըսես, հարսնքուր:

Հարսնաբու.— Ի՞նչ պիտի կ'անք ընել, հըպը:

Մկօ.— Կէցեք, հիմա տէր պապան հոս պիտի գայ, է՛ն

էնէջ մէյ մը ան պէք քէ տեսնինք: Եւքքը էմմէն բան կարգին կը մտնէ: Պէք քէ տեսնինք հարսին հարն ու մարըն ա: Ասուած ի՞նչ կամեցեր է նը ան կ'ըլլայ: օրհնեա՛լ է Աստծու կամքը: Ո՞վ կայ դուրսը նէյինք: (Մկօ դուրս կ'ելլէ: Դուրսը աղմուկ):

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ՏԷՐ ԴՈՒՆԿԻԱՆՈՍ

Մկօ (Տրտրին հետ ներս մտնելով).— Էկօ, տէրտէր, Աստծու հրաշքը տես:

Տրտր.— Ողջո՛յն ձեզ: Ի՞նչ կայ, օրհնածներ:

Մկօ.— Մենք հրաշք մը գործուած է: տէր պապա: Մենք Աստուծմէ ուրիշ հարս մը առեր ինք:

Տրտր.— Աս ձեր հարսը չէ՞:

Մկօ.— Մեր հա՛րսն է...: Աստծու սեղանին էնջին մեր տղուն հետ պսակուած հարսն է...:

Տրտր.— Ի՞նչպէս կ'ըլլայ...:

Մկօ.— Աստծու կամքն աս է էջեր: Եւ սուրբ սեղանին էնջին օրհներ ես, մեր տղին հարս առեր է Ասուած սա աղջիկը: Կ'երեւի մեր ուզած հարսն ա ուրիշ փեսի մը օրհնուած է:

Տրտր.— Աստծու սեղանին էնջին, սուրբ նարօտը տղուդ համար աս հարսի՞ն վրայ դրուեր է:

Մկօ.— Հա՛:

Տրտր.— Հրա՛շք...:

Սողմէ.— Իրա՛ւ հրաշք...:

Հարսնուր.— Հիմա ի՞նչ կնանք ըներ, տէր պապա, ի՞նչ խրատ պիտի տաս:

Տրտր.— Ի՞նչ պիտի կնանք ըներ. Ասուած աս հարսը տուեր է ասոնց զաւկին՝ Դանէլին: «Զոր Ասուած զուգեաց մարդ մի մեկնեցէ», կ'ըսէ Սիւրբ Աւետարանը: Աստծու կապածը կապած, քակածը քակած է:

Հարսնուր.— Հիմա ի՞նչ պիտի ըսին Չախալ Պետոն,

մանչերնին՝ փեսայ Ակսրը, Չախալոնց Գարէլը, աս աղջկան հարն ու մարը:

Տրտր.— Ի՞նչ պիտի ըսին Աստծու տնօրինութեան դէմ:

Հարսնուր.— Մեղա՛յ Ասուած, մեղա՛յ Ասուած...:

(Վարագոյրը կ'իջնէ)

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Բ.

(Տեսարանը կը ներկայացնէ առաջնորդարանը, սենեակ մը, բազմոց մը, արձուներ, սեղան մը, երկու պատահաններ)

Տ Ե Ս Ի Լ Ա.

Տ. ԴՈՒՆԿԻԱՆՈՍ ԵՒ ԶԱԽԱԼ ՊԵՏՕ

Տրտր.— Հարսդ, ըսելէ, մօրը տունն է հիմա:

Պետ.— Հա՛, տէր պապա:

Տրտր.— Էղսա տուն ի՞նչ կ'ըսէ:

Պետ.— Ան ա չուարած, փուսուլան շաշմիշ ըրած է:

Տրտր.— Տղան չէ՞ք համոզեր:

Պետ.— Շատ աշխատեցանք, շատ իք ըրինք, ըմբ, նօ կ'ըսէ նոխուտ չըսեր:

Տրտր.— Աստուծմէ էղած բանին ի՞նչ կնանք ըսեր:

Պետ.— Իրաւունք ունիս, տէր պապա, ըմբ մեր տղան չիք կընը հայ համոզեր:

Տրտր.— Կնքահա՞րն ինչ կ'ըսէ:

Պետ.— Ի՞նչ պիտի ըսէ, ան ա շաշմիշ էղած մնացած է:

Տրտր.— Ըսել է հարսդ ինքն ա չուզեր տղադ:

Պետ.— Բան մ'ըսած չունի. հարն ու մարը էկան առին, տիւն տարին: Ակոբս, չիմ ուզեր, կ'ըսէ կը կենայ հայի, ի՞նչ ընին հըպը:

Տրտր.— Է, ի՞նչ, Հոռո՞փը կ'ուզէ:

Պետո.— Հա՛, իմ հարսս Հոռոփն է, կ'ըսէ, էս անկէ զատ ուրիշ աղջիկ չիմ առներ, կ'ըսէ:

Տէրտէր.— Աստուծոյ կամքին հետ ընտո՞ր կնայ ելլել: Ես աս տղադ խելացի գիտէի:

Պետո.— Ակոբս խելացի է ըմբ, երկու գէշ ընկեր գտած է, անոնց խօսքէն դիւրս չեկեր:

Տէրտէր.— Ո՞վ են աս ընկերները:

Պետո.— Մէկը Մոմոնին Տաքէսին տղան, մէկն աս տէր Նիկոյին լակոտը: Երկուքն աս մէկ բերան դէմ ին ու տղաս իրենց ձեռքն առեր կը պոռպոռան, կը խաղցնեն:

Տէրտէր.— Տէր Նիկոն պէլքի կնայ համոզուիր, ըմբ, Մոմոնին Տաքէսը պինդ գլուխ է:

Պետո.— Անոնցմէ խեր չկայ, տէրտէր:

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԷՐԿԱՆ ԱՐՇԱԿ

Արեակ (Ներս մանկուլ).— Օրհնեա տէր, տէր պապա, բարե Պետո:

Տէրտէր.— Աստուծոյ օրհնէ, հրամայէ նստէ:

Պետո.— Աստուծոյ բարին:

Արեակ (նստելու).— Է՛, ի՞նչ կը մտմտաք, հիմա, տէր պապա:

Տէրտէր.— Ի՞նչ պիտի մտմտանք: Օրդի, էղածն է կը խորաթինք հայի:

Արեակ.— Է՛, ասոր վերջը ո՞ւր պիտի երթայ, տէրտէր:

Տէրտէր.— Իրաւ օր էս աս չիյտեմ, Հարսնիք մեղաւ հարսնիք չէ: Գեղն էմմէն տակն ու վրայ. փիւթիւնն աս կը խորաթին, հի՛չ պաշխա բան չին ըսեր: Աս ասանկ էրթայ նը մեր գեղը տայն ու վրայ պիտի ըլլայ:

Արեակ.— Գոնէ վանքը լուր մը զրկեցի՞ր: Անկէ մէկը չը՞ կընը գար տը աս պէլան մաքրեր:

Տէրտէր.— Ղրկեցի, օղուլ, զրկեցի, հըպը՛, Պէլքի տը աս օր մէկը կու գայ: Նէյինք աս փորձանքին տըկէն ըն-

տո՞ր պիտի ելլինք: Պէք քէ որ ամէնքն աս համոզուին, էղածն Աստուծոյ է, ո՞վ կնայ դէմ էրթար:

Պետո.— Մենք աս աս կ'ըսինք, ըմբ, էկօ տը մեր տըղան համոզէ: Շատ կը վախիմ օր փորձանք մը կը հանին:

Տէրտէր.— Աստուծոյ չընէ... Տղադ հի՞չ հաւատք չունի օր:

Պետո.— Ունի, տէր պապա, ունի, ըմբ, ի՞նչ ըսիմ իրեն առխատալ լակոտներուն. անոնք էն զլխէ կը հանին տղաս:

Տէրտէր.— Նէյինք, թո՛ւ վարդապետը գայ տը, հէլ-պէթ ճար մը պիտի կնանք գտնել:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԶԱԽՁՈՆՑ ԳԱՐԲԵԼԸ

Գարեկ.— Օրհնէ՛ տէր, տէր պապա, բարե ձեզ աներ:

Տէրտէր.— Աստուծոյ օրհնէ, օղուլ, էկօ նստէ:

Պետո եւ Արեակ.— Աստուծոյ բարին:

Գարեկ.— Ինչո՞ւ կանչեր ես, տէր պապա:

Տէրտէր.— Հա՛, օղուլ, նէյինք աս փորձանքին տակէն ընտո՞ր պիտի կնանք ելլալ:

Գարեկ.— Ընտո՞ր պիտի ելլանք, տէր պապա: Աստուծոյ ինք իր ձեռքով էմմէն բան կարգադրեր է, մենք ի՞նչ կնանք ընենք: Ես աս շատ ցաւեցայ, շատ զարմացայ, ըմբ, մեր ձեռքն ի՞նչ կայ: Մենք էմմէնս աս Աստուծոյ ձեռքը խաղալիք ինք:

Տէրտէր.— Դանէլն իմացա՞ւ Ակորին և անոր առեւտաշներուն պինդգլուխութիւնը: Ա՞ն ի՜նչ կ'ըսէ հայի:

Գարեկ.— Իմացաւ: Դանէլը, տէր պապա, շատ աստուծաւախ տղայ է, ան իր ծնողքին խօսքէն զուրս չեւլար: Տեսաւ որ Աստուծոյ ասանկ կամեցեր է. «Օրհնեալ է Աստուծոյ կամքը» ըսաւ և հնազանդեցաւ:

Տէրտէր. — Աղջիկդ ինչ կ'ըսէ:

Գաբրիէլ. — Ի՞նչ պիտի ըսէ Հոռոփը. բախտս աս է եղեր, Աստուած ասանկ կամեցեր է եղեր, ի՞նչ ընեմ, ըսելով մխիթարուեցաւ:

Տէրտէր. — Խնամի՜նք ինչ կ'ըսին:

Գաբրիէլ. — Ո՞ր խնամիները: Ահա մէկ խնամիս, Չախալ Պետոն հոս է. Տանտանենց Մկոն ըսես նը, էրիկ կնիկ, Աստծու կամքն աս է եղեր ըսելուկան, փառք կու տան Աստծու:

Պետո. — Էկօ տը մեր տղի՛ն հարցու մէ մը:

Գաբրիէլ. — Գիտեմ, ախպար գիտեմ. ճահէլ տղայ է, հէլպէթ պաշխալ 2-3 ճահէլ ա գտած է ու չուզեր գլոխ ծըռել, հիմը ի՞նչ պիտի ընինք: Էլլանք պատերա՞զ՝ ընինք, Աստծու կամքին դէմ պայրա՞խ քաշինք:

Պետո. — Էկօ տը աս ճահիլներուն հասկցու:

Գաբրիէլ. — Մենք մենծերս մեր տղոց խօսք չկրնանք հասկցնել նը, ո՞վ պիտի հասկցնէ:

Պետո. — Ըսելը ղուայ է ըմը, ընե՛լը:

Գաբրիէլ. — Ի՞նչ կնանք ընել: Աստծու կամքին ո՞վ հաւատակ կնայ երթար:

Տէրտէր. — Այո՛, Աստծու կամքը էտէջ է. Աստուած մեծ է, մեռնի՛մ անոր զօրութանը:

Ժամկոչը (Ներս կը մտնէ). — Հայր Սուրբը եկեր է վանքէն:

(Ամենքը ոտքի կ'ելլեն անապարհանով: Տէր Ղուկիանոս ղուրս կ'ելլէ, իր ետեւէն բոլորը:)

Տ Ե Ս Ի Լ Դ.

(Ներս կը մտնեն Ամբակում վարդապետ եւ տէր Ղուկիանոս, ապա միւսները:)

Ամբակում վարդ. — Ի՞նչ է պատահեր ձեր գեղին մէջ:

Տէրտէր. — Հրամեցէք, նստեցէք, Հայ սուրբ, հիմա կը պատմիմ: (Կը նստին) Երկուշաբթի առտու մեր գեղը մենծ տակնուվրայութիւն, մենծ իրարանցում կար, Չտեսնուած,

չստեղծ բան էր: Տասը նոր հարսներ ու փեսաներ կային: Պսակները մէկտեղ, ժամը բերինք, ըրինք, Ընտոր մեղեր է հարսներն ու փեսաները դասը տարած տաննիս, Երկու հարսներ փոխուեր ինչ: Մէկ զգեստ, մէկ բէնկ, մէկ կերպարանք ունէին: Մէկ պոյ, գիտես տը չառիէ կըյրուած երկու հարսներ էին: Ի՞նչ գիտնամ էս, ընտոր էղեր է, երկու հարսները փոխուեր ինչ: Երկուքը մէկ իրարու էոջի կայներ ինչ էղեր, ժամկոչը էտէջ կը քաշէ: Մէկը մէկին տեղը կ'անցնի: Պսակի արարողութիւնը կատարեցինք, լմնցուցինք, Էմմէն թախմ, Թայթա, իր տունը գնաց: Մէկ մըն ա ընծի իմացուցին տը հարսին մէկը փոխուեր է տէյի վազեցի, երթամ նէյիմ օր Չախալ Պետոյին հարսը Տանտանենց Մկոյին հարս գացեր է, Տանտանենց հարսն ա Չախալ Պետոյին տիւնը տարեր ինչ:

Ամբակում վարդ. — Ի՞նչ ըրիք այն ատեն:

Տէրտէր. — Ի՞նչ պիտի ընէինք: Տանտանենց Մկոն կընիկը՝ Սողմէ, երբ օր կ'իմանան նը կը զարմանան կը մընան: Էտէջ իրենց տղին Զախլոնց Գաբրէլին աղջիկը՝ Հոռոփը կ'ուզին էղեր առնել, ըմը էք լսեր ինչ օր Հոռոփը Չախալ Պետոյին Ակոբին նշաներ ինչ, վազ անցեր ինչ, ու գացեր իրենց տղին նշաներ ինչ էրկան Արչակին Մարիամը: Հիմա Աստծու հրաշքը հոս է օր, ժամուն, Ս. Սեղանին էտէջին, Աստծու հրամանով աս էրկու հարսները փոխուեր ինչ. պսակն ա էս կատարեցի:

Ամբակում վարդ. — Լա՛ւ, խնամիներն ու հարս-փեսաները ի՞նչ կ'ըսեն. գո՞հ են ամէնքն ալ:

Տէրտէր. — Տանտանենք և Զաղլոնց Գաբրէլի ընտանիքը եղածէն գո՛ ինչ, Չախալ Պետոյի ընտանիքն ա հաւանին պիտի, լաքին Պետոյի տղան՝ Ակորը գլոխը տնկեր, չէ՛, կ'ըսէ, իր նիշանածը կ'ուզէ: Հիմա ի՞նչ պիտի ընինք:

Ամբակում վարդ. — Հիմակ հարսներն ու փեսաներն ո՞ւր ինչ: Ամէնքն ալ իրարու քո՞վ են:

Տէրտէր. — Դանէլին հարսը իրենց՝ Տանտանենց տիւնն է՝ ըմը Չախալ Պետոյին հարսը հօրն ու մօրը տիւնը գացած է:

Ամբակում վարդ. — Աս ներկաներն ով են:

Տէրտէր. — Աս Զախլախենց Գաբրէլն է, մէկ հարսին,

Հոռոփին պապան։ Աս ալ Արչակն է, մէկալ հարսին՝ Մա-
խամին պապան։ Աս բարեկամն ա Չախալ Պետոն է, փեսայ
Ակորբին պապան։ Ասոր տղան է օր էմմէն հաշիւները ջուրը
կը ձգէ։

Ամբակում վարդ.— Ի՞նչ կ'ըսէ քու տղադ, Յակորբ։

Պետո.— Հայր Սուրբ, էս քու կարգին մեռնիմ, աս
մեր գլխուն էկած պելան վերցո՛ւ։ Տղաս՝ Ակորբը նո կ'ըսէ,
նոխուտ չըսեր, էս իմ հարսը կ'ուզիմ, կ'ըսէ, չէնը աշ-
խարքը ալ թիւսթ կ'ընիմ, կ'ըսէ։

Ամբակում վարդ.— Լա՛ւ, ձեր առջի հարսնցուն, Հը-
ռիփսիմէն կ'ուզէ՞ տակաւին ձեր մանչուն կինն ըլլալ։

Պետո.— Ի՞նչ գիտնամ։ Կէլպէթ ալ չուզեր օր Տանտա-
նենց տիւնէն դիւրս էլած չէ։

Ամբակում վարդ.— Դուն, պարոն Գաբրէլ, դուն գո՛հ ես
նոր փեսայէդ։ Գո՛հ ես որ աղջիկդ Մկոյի տղուն հարսը մնայ։

Գաբրէլ.— Ի՞նչ կնամ ըսեր, Հայ Սուրբ, Աստուած կա-
մեցեր է որ մեր աղջիկը Տանտանենց Մկոյի Դանէլ տղուն
հարսն ըլլայ էղեր։ Ի՞նչ կնամ ըսեր։ Օրհնեալ է Աստու-
ածքը, պիտի ըսիմ։

Ամբակում վարդ.— Կի՞նդ ինչ կ'ըսէ։

Գաբրէլ.— Ան ա ինծի պէս կը խորի. անա Աստուած կը ձգէ։

Ամբակում վարդ.— Տէ՛ր հայր, կրնա՞ք ինծի Յակորբը
հոս բերել տալ։

Տէրտէր.— Հիմա մէկը ղրկեմ, թող գայ, պէլքի տը
դիւրսն է։

Ամբակում վարդ.— Կանչել տուէ՞ք։ (Քահանան դուրս
կ'ելլէ։)

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆԵՐՍ ԿԸ ՄՏՆԵՆ ՔԱՀԱՆԱՆ ԵՒ ԱԿՈՐ

Տէրտէր.— Ակորբը դռան էնջին է էղեր, Հայ Սուրբ,
ահա ինքն է։ Գնա՛ Հայ Սուրբին ձեռքը պագ, մանչս, օր
քեզ օրհնէ, պէլքի գործդ յաջողի։

(Ակորբ առաջ կ'անցնի, վարդապետին ձեռքը կը համ-
բուրէ եւ ոտի կը կեցայ)։

Ամբակում վարդ.— Աստուա՛ծ օրհնէ, Աստուած օրհնէ,
նստէ սա աթոռին վրայ, տղաս։ (Ակորբ կը նստի)։ Ի՞նչպէս
ես, տղաս, Յակորբ, լա՛ւ ես։

Ակորբ.— Ի՞նչպէս կ'ուզես օր ըլլամ, գլխուս էկած փոր-
ձանքը Կէլպէթ իմացեր էս։

Ամբակում վարդ.— Իմացայ տղաս։ Քեզի մէկ երկու
հարցում պիտի ընեմ, կը յուսամ խորհելով պատասխան
կու տաս։ Դուն կը հաւատա՞ս թէ մարդիկ ինչ որ գործեն
Աստուած կը տեսնէ ու գիտէ։

Ակորբ.— Կը հաւատամ։

Ամբակում վարդ.— Կ'ընդունի՞ս թէ տէր Ղունկիանոս,
ձեր քահանայ հայրը բարի, աստուածավախ մարդ մըն է։

Ակորբ.— Կ'ընդունիմ։

Ամբակում վարդ.— Գիտե՞ս թէ տէր հայրը սուրբ ըզ-
գեստները հագած, Աստուծոյ սեղանին առջև կանգնած, Աս-
տուծոյ աղօթք կը մատուցանէ, Աստուած կը լսէ անոր ձայնը։

Ակորբ.— Այո՛։

Ամբակում վարդ.— Գիտե՞ս թէ Աստուծոյ յարմար դա-
տած ու որոշածը, անպատճառ և անպատճառ կը կատարուի։

Ակորբ.— Գիտիմ։

Ամբակում վարդ.— Գիտե՞ս թէ Աստուծոյ որոշումին
դէմ չեն կրնար գործել ոչ տէրաւորները, ոչ վարդապետները
և ոչ ալ եպիսկոպոսները։

Ակորբ.—

Ամբակում վարդ.— Աստուծոյ դէմ ո՞վ կրնայ գործել,
կա՞յ մէկը։

Ակորբ.— Չէ։

Ամբակում վարդ.— Ուրեմն, տղաս, կը տեսնես որ ձեր
եկեղեցիին մէջ մեծ հրաշք մը գործուած է։ Այսպիսի խոշոր
հրաշք քիչ անգամ պատահած է։ Աստուած երեւցեր է ձեր
գիւղի եկեղեցիին մէջ, ձեր ամենուն վրայ իր երկնային
սուրբ օրհնութիւնը թափեր է։ Աստուած այցելեր է ձեր
գիւղը, օրհներ է ձեզ։ Եւ գիտէ՞ք թէ Աստուած ամէն տեղ

է, ամէն բան կը տեսնէ, մեր գլխուն գալիք ապագայ բո-
լոր փորձանքները առաջուց գիտէ. ահա Աստուած եկեր է
ձեր գիւղի եկեղեցին, տեսեր է բազմաթիւ նոր զոյգերը,
որոնք այս գիւղին օրհնութիւնը պիտի ըլլան, տեսեր է
ձեզ բոլորդ և հաւանաբար տեսեր է ապագային ձեր ամէն
մէկին գլխուն գալիքը, ո՞վ գիտէ ի՞նչ փորձանքներ, ի՞նչ
դժբախտութիւններ, ի՞նչ մահեր, ի՞նչ սարսափելի ցաւա-
գարութիւններ տեսաւ Աստուած ձեր գիւղին մէջ, մանա-
ւանդ այդ սուրբ պսակին առաջնորդուած զոյգերուն վրայ և
եկաւ իջաւ վար, երկու զոյգերը փոխանակեց, երկու հարս-
ներ իրարու տեղ դրաւ, որպէսզի երջանիկ ապրին, իրար-
մով չէննան, բազմաթիւ զաւակներով հարստանան:

Հիմակ դուն, սիրելի տղաս, զո՛ւն ըսէ՛. պէտք չէ՞ որ
ուրախ ըլլաս. ո՞րչափ սուրբ սիրտ ունիք եղեր երկու հարս
ու փեսաներդ, որ Աստուած եկեր է ձեզի օգնելու, իր սուրբ
խորհուրդը գործադրեր է ձեր վրայ, ես չա՛տ զարմացած
եմ. դուք երկու նոր հարս փեսաներդ այս գիւղին է՛ն
սուրբ, է՛ն օրհնուած, է՛ն աստուածաբաւ զաւակներն էք
եղեր: Ուրեմն դուք փա՛ռք պէտք է տաք Աստուծոյ, որ
այցեւեր է, եկեր է ձեր գիւղն ու եկեղեցին: Այս ի՞նչ
սուրբ եկեղեցի ունիք եղեր դուք, այս ի՞նչ սուրբ քահա-
նայ ունիք եղեր, դուք սուրբերուն ըրածին պէս իրարու
հետ համընդունելով Աստուած օրհնելու էք: Ի՞նչ նախանձե-
լի պատուական գիւղ է եղեր ձեր գիւղը: Ի՞նչ Աստուծոյ
սիրած, օրհնած հարս-փեսաներն էք եղեր դուք: Ելի՛ր, զա-
ւակս, եկո՛ւր, Աստուծոյ օրհնութիւնը ես ալ անգամ մը
ես կարդամ վրադ: Դուն Աստուծոյ սիրած, ընտրեալ զառ-
նուկն ես եղեր: Աստուա՛ւ հայրիկը ձեզ օրհնե՛ր, օրհնե՛ր է:
Եկո՛ւր ես ալ Աստուծոյ օրհնութիւնը անգամ մըն ալ իմ
միջոցաւ, իմ բերնով կարդամ, եկո՛ւր օրհնեմ քեզ, զաւա՛-
կըս, Աստուծոյ սո՛ւրբ զաւակը:

(Ոսփի կ'ելլեն բոլոր. քեր Ղուկկիանոս կը մօտեցայ Ա-
կոբին, կը փայփայէ գայն, կը մօտեցնէ վարդապետին, բոլոր
ներկաները ուրախ կ'ուլան: Հայր Սուրբը կ'օրհնէ հանդիսա-
ւոր կերպով):

(Վարագոյրը կ'իջնէ)

ՀՀ Ազգային գրադարան



NL0224794